

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

ՀԱՐԹԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար ԺԻՐԱՅՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 26.12..2016 թ. Թիվ 32 որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

ՀԱՐԹԱՎԱՆ 2016թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն  
  - 2.1 Համայնքի ընդհանուր նկարագրությունը
  - 2.2 Համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակը
  - 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը
  - 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսումներ
  - 2.5 Համայնքի սոցիալ- տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ
  - 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՅՍ) վերլուծությունը
3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում  
  - 3.1 Համայնքի զարգացման հեռահար նպատակի (տեսլականի ) սահմանում
  - 3.2 Համայնքի անմիջական նպատակների սահմանում
4. ՀՀԶԾ ֆինանսավորում
5. ՀՀԶԾ նոնիթորինգ

# 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարթավան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի (ՀԶԾ) մշակման հիմքում դրվել են Հարթավան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի և դիրքորոշումների փոխհամաձայնեցված դրույթները համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ:

Սույն ծրագիրը մշակվել է նկատի ունենալով համայնքի ֆինանսական կարողությունները, բնակչության թվաքանակը, համայնքի կազմում մեկ բնակավայր ընդգրկված լինելու հանգամանքը, համայնքում առկա ենթակառուցվածքները, համայնքի կողմից մատուցվող ծառայությունները և համայնքում առկա վտանգները:

ՀԶԾ-ն բաղկացած է հինգ բաժիններից: Ծրագրի երկրորդ բաժինը նվիրված է համայնքի իրավիճակի նկարագրությանը, հիմնախնդիրների և կարիքների բացահայտմանը, վերլուծությանը և գնահատմանը: համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների ու վտանգների վերլուծությանը, ինչպես նաև համայնքի զարգացման միտումների նկարագրմանը:

Ծրագրի երրորդ բաժնում ձևակերպված են համայնքի տեսլականը, դրան հասնելու ռազմավարությունը առաջիկա հինգ տարիների ընթացքում և ծրագրի հիմնական նպատակները:

Ծրագրի չորրորդ բաժնում տրված է համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, առաջիկա հինգ տարիների ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը, որոնց սահմաններում պլանավորվելու են իրականացվելիք ծրագրերը:

Սույն ծրագիրն ունի նաև եզրափակիչ մաս, որտեղ տրված են ՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման, վերահսկման և գնահատման հետ կապված մոտեցումները:

Հարթավան համայնքի ՀԶԾ-ը միտված է իրականացնելու համայնքի զարգացման տեսլականն առաջիկա հինգ տարիների համար, նախանշում է զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները:

Վերջին 15 – 20 տարիների ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք կենսական նշանակություն ունեցող ծրագրեր մասնավորապես վերանորոգվել և արդիականացվել է համայնքի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերը , վերանորոգվել է մշակույթի տունը, բուժկետը , հիմնանորոգվել և 2014 թվականից գործում է համայնքի մանկապարտեզը , կառուցվել է կաթի ընդունման կետ, որի հենքի վրա ստեղծվել « Հարթավան կաթ» կոոպերատիվը, սակայն դրա արդյունավետությունը բարձր կլիներ այն դեպքում, երբ կաթի ընդունման կետում կազմակերպվեր կաթի վերամշակում , կառուցվել է 500 մ ներհամայնքային ոռոգման ցանց, բարեկարգվել է դպրոցի մարզահրապարակը , ավարտվել է համայնքի գազիֆիկացման աշխատանքները:

Չնայած իրականացված ծրագրերի համայնքում դեռևս առկա լուրջ հիմնախնդիրներ , որոնք հրատապ լուծում են պահանջում : Առաջնահերթ խնդիր է համայնքի ոռոգման ջրի ապահովման հարցը: Համայնքը ունի 890 հա վարելահող , որից նախկինում ոռոգվում էր 510 հա - ը , իսկ ներկայումս ոռոգվում է 165 հա : Հիմնական խնդիրը կայանում է նրանում , որ համայնքը ապահովված չէ ինքնահոս ջրամատակարարմամբ` ոռոգման ջուր ստանում է Ապարանի ջրամբարից` պոմպի

միջոցով և ոռոգման ցանցի անբարվոք վիճակի պատճառով սպառողին է հասնում մեծ կորուստներով, որի պատճառով բարձրանում ջրի վարձը, որն էլ իր հերթին բացասաբար է ազդում ստացված գյուղմթերքների ինքնարժեքի վրա: Արագած լեռան ստորոտից մինչև համայնք գոյություն ունի ոռոգման ինքնահոս համակարգ, որը ոչ մեծ ներդրումներով հնարավոր գործարկել: Նախկինում նախագծվել էր կառուցելու Վարդենուտի ջրամբարը, որը ի թիվս մյուս համայնքների Հարթավան համայնքին էլ վերը նշված համակարգով կապահովեր ինքնահոս ջրամատակարարմամբ: Հրատապ լուծում է պահանջում համայնքի ներհամայնքային ճանապարհների վերակառուցումը, փողոցային լուսավորության անցկացումը: Հարթավան համայնքը նախկինում խմելու ջուր ստացել է հարևան Քուչակ համայնքի վարչական տարածքում գտնվող « Ամբառլու » կոչվող ջրաղբյուրից և տարեց տարի անհիմն պատճառներով՝ ջրի ոչ արդյունավետ օգտագործման, ջրաղբյուրի կապտածների անբարվոք վիճակի հետևանքով 2012 թվականից համայնքը նշված համակարգով ջուր չի ստացել: Նշված ժամանակահատվածից համայնքը խմելու ջուր ստանում Ապարան - Երևան ջրատարի Ապարանի ջրամբարի հատվածից պոմպակայանի միջոցով՝ տարեկան ծախսելով 5-6 միլիոն ՀՀ դրամ, որը իՖՀ խոսք համայնքի զարգացման համար մեծ խոչընդոտ է: Սույն հնգամյա ծրագրի մշակման, հիմնախնդիրների առաջնահերթությունների սահմանման, անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթման նպատակով կազմակերպվել են քննարկումներ համայնքի բնակիչների և խորհրդակցական մարմնի ներկայացուցիչների հետ:

## ***2. Համայնքի իրավիճակի նկարագրություն***

### ***2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն***

Հարթավան համայնքը (նախկին Ղարաքիլիսա) բնակավայրը կազմավորվել է 1826 –1829 թթ-ին Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայ ընտանիքների կողմից :Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Մայրաքաղաքից հեռու է 42կմ, իսկ Ապարան քաղաքից 12 կմ : Աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է հաղորդակցման տեսակետից, քանի որ նրա միջով անցնում է միջպետական Երևան-Թբիլիսի մայրուղին:

Գյուղի արևելյան մասում գտնվում է Ծաղկունյաց , արևմտյան մասում՝ Արագած հարավային մասում՝ Արայի լեռները, իսկ հյուսիսային մասում՝ ձգվում է Փամբակի լեռնաշղթան: Գյուղի ռելիեֆը մասամբ հարթ է, տեղ-տեղ բլրաձևային: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Տեղումների տարեկան քանակը կազմում է 550 – 600 մմ, որը խիստ անհամաչափ է բաշխվում տարվա ընթացքում: Համայնքի վարչական տարածքը կազմում է 1417.55 հա: Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ հողատեսքերի ամփոփված է աղյուսակ 1 - ում

		Ընդամենը	Համայնքում առկա	պետական	իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն
2.1.	Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝	1417.55	470.46	60.37	886.72
2.2.	գյուղատնտեսական նշանակության հողեր	1239.46	421.38	36.83	781.25
2.3.	պահուստային հողեր	458.21	421.38	36.83	
2.4.	բնակելի շինությունների տակ հողեր	132.58	32.99	1.59	98.0
2.5.	արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր	14.78	7.50	0.0	7.28
2.6.	ընդերքօգտագործման հողեր	9.23	0.0	9.23	
2.7.	ճանապարհների տակ հողեր	5.21	0.0	5.21	
2.8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	3.33	3.33	0.0	
2.9.	անտառային հողեր	4.38	0.0	4.38	
2.10	ջրային ֆոնդի հողեր	8.38	5.25	3.13	
2.11	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ				
2.12.	Էներգետիկա , կապ	0.19	0.0	0.0	0.19

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

		Մշտական			Առկա		
		ընդամենը	այդ թվում՝		ընդամենը	այդ թվում՝	
			արդյունաբերական	գյուղատնտեսական		արդյունաբերական	գյուղատնտեսական
1	բնակչության թվաքանակը, մարդ	1115	534	581	1123	534	581
2	տնային տնտեսությունների թվաքանակը	209	X	X	209	X	X
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	0	X	X	0	X	X
2.2	կիսակառույց տներում բնակվող	0	X	X	0	X	X
3	ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	23	X	X	23	X	X

Համայնքի բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելիության

ընդամենը

1. հայ.....	1113
2. ռուս.....	1
3. եզդի .....	1

համայնքի բնակչության բաշխումն ըստ հետևյալ տարիքային խմբերի (մարդ).

	Ընդամենը	այդ թվում՝ իգական	այդ թվում՝ արական
1. մինչև 1 տարեկան.....	7	5	2
2. 1-2 տարեկան.....	29	16	13
3. 3-4 տարեկան.....	34	20	14
4. 5-6 տարեկան.....	29	13	16
5. մինչև 6 տարեկան.....	85	47	38
6. 7-10 տարեկան.....	50	30	20
7. 11-14 տարեկան.....	43	19	24
8. 15-17 տարեկան.....	25	13	12
	198	105	93
9. մինչև 16 տարեկան.....			
10. մինչև 18 տարեկան.....	217	116	101
11. 18-22 տարեկան .....	88	38	50
12. 23-45 տարեկան.....	461	245	216
13. 46-62 տարեկան.....	265	122	143

**2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը**

. Հարթավան համայնքի 2016 թ տարեկան բյուջեն կազմել է 26125.5 հազ դրամ:

. Ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտները կազմում են 68%

. Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը արտացոլված է աղյուսակում

. Մշակվող սեփականաշնորհված գ/տ հողերի բաշխվածությունն ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների 2016թ. տվյալներով.

		Տարածքը	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը (բերքատվությունը)
		հա	տոննա
1.	Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր	105	2.0
<i>այդ թվում՝</i>			
1.1.	ցորեն	45	2.5
1.2.	գարի	35	2.5
1.3.	հաճար	25	1.5
2.	Կարտոֆիլ	15	22
8.	Կերային մշակաբույսեր	250.0	3.5

Համայնքում առկա անասնազլխաքանակը առ 01.01.2016 թ. դրությա կազմում է (գլուխ)

		Ընդամենը
1.	Խոշոր եղջերավոր անասուններ, որից	<b>665</b>
2.	կովեր	<b>325</b>
3.	խոզեր	<b>42</b>
4.	Ոչխարներ և այծեր	<b>291</b>
5.	Հավեր և/կամ այլ թռչուններ	<b>1629</b>
6.	Մեղվաընտանիք /փեթակներով/	<b>44</b>

Համայնքում տարեկան արտադրվում է հետևյալ անասնապահական մթերքները.

1. Կաթ կովի 812.5 տոննա
2. Միս 45.0 տ
3. Չու 260 հազար հատ
4. Մեղր 800 կգ

Գյուղմթերքներից կաթը հիմնականում հանձնվում է « Հարթավան կաթ » կոոպերատիվին, իսկ մնացածը իրացվում է շուկայում:

.Հարթավան համայնքում առկա է դպրոց , մանկապարտեզ:

Աշակերտների թիվը դպրոցում կազմում է 113 աշակերտ , իսկ մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 40:

.Համայնքում գործում է բուժկետ , որը սպասարկվում է Շենավանի բուժական ամբուլատորիայի կողմից:

.Ընտանեկան համակարգում ընդգրկված ընտանիքների թիվը կազմում է 23 :

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

.Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք 5 տարիների համար նախատեսվում է վերանորոգել համայնքի միջնակարգ դպրոցը:

.Նախատեսվում է միջհամայնքային համագործակցության արդյունքում Քուչակ համայնքի հետ վերակառուցել <<Ամբառլուի >> ջրաղբյուրի ջրհավաք ավազանը, որի արդյունքում համայնքը կունենա ինքնահոս խմելու ջուր և տարեկան կտնտեսվի շուրջ 3.5 - 4 մլն ՀՀ դրամ, որը կուղղվի համայնքային այլ խնդիրների լուծմանը:

.Կշարունակվի համագործակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների մասնավորապես << ՇԵՆ >> ԲՀԿ – ի , << ՎՈՐԼԴ ՎԻՓՆ >> ԲԿ և այլ կազմակերպությունների հետ:



**2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ**

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջետային մուտքերի կանխատեսումը (հազար դրամ)

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. պլան	2017թ. կանխ	2018թ. կանխ	2019թ. կանխ	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ` ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*</b>	25437.2	26248.0	29092.7	30939.6	32569.6	34089.6	35439.6
I.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*</b>	25437.2	26248.0	29092.7	30939.6	32569.6	34089.6	35439.6
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	5928.0	5877.1	7749.0	9135.9	10415.9	11725.9	12855.9
1.1	<b>Գույքային հարկեր անշարժ գույքից</b>	3826.5	3769.5	4892.4	5985.1	7015.1	8065.1	9075.1
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	206.5	170.5	277.8	370.5	400.5	450.5	460.5
	Հողի հարկ	3620.0	3599.0	4614.6	5614.6	6614.6	7614.6	8614.6
1.2	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	1949.6	1897.6	2255.8	2500.8	2700.8	2900.8	3000.8
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1949.6	1897.6	2255.8	2500.8	2700.8	2900.8	3000.8
1.3	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	152.0	210.0	600.8	650.0	700.0	760.0	780.0
	Տեղական տուրքեր	152.0	210.0	600.8	650.0	700.0	760.0	780.0
1.4	<b>Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ</b>							
	Պետական տուրքեր							
1.5	<b>Այլ հարկային եկամուտներ</b>							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</b>	16674.3	17743.7	17743.7	17743.7	17743.7	17743.7	17743.7
2.1	<b>Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							

2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	16275.8	17743.7	17743.7	17743.7	17743.7	17743.7	17743.7
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	398.5	122.5	0.0	0.0	0.0	0.0	0.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3.	ԱՅԼ ԵՎԱՍՍՈՒՏՆԵՐ*	2834.9	2504.7	3600.0	4060.0	4410.0	4620.0	4840.0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	704.9	604.7	700.0	760.0	810.0	820.0	840.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	573.4	604.7	640.0	700.0	750.0	760.0	780.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	0.0	0.0	60.0	60.0	60.0	60.0	60.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	1081.6	800.0	1700.0	1800.0	1900.0	2000.0	2100.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							

3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ	60.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	1081.6	800.0	1700.0	1800.0	1900.0	2000.0	2100.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*	988.3	1100.0	1200.0	1500.0	1700.0	1800.0	1900.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	3446.0	2000.0	2000.0	3000.0	3500.0	4000.0	4500.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	988.3	1100.0	1200.0	1500.0	1700.0	1800.0	1900.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	-152.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2.	Պաշարների իրացումից մուտքեր							
3.	Բարձրարժեքակտիվների իրացումից մուտքեր							
4.	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							

	Հողի իրացումից մուտքեր	-152.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							

Բյուջետային ծախսեր

		(հազ. դրամ)						
		2015թ փաստացին	2016թ պլան	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
1	Ընդամենը ծախսեր	25437.2	26248	29092.7	30939.6	32569.6	34089.6	35439.6
2	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ	9173.4	9157.6	11378.3	11500	11600	11700	11800
3	Կրթություն և գիտություն	5252.9	5160	5950	6100	6100	6100	10300
4	Սոցիալական ապահովագրություն և ապահովություն	20	200	200	300	400	500	600
5	Մշակույթ և սպորտ	2179.2	1958	1960	1960	1960	1960	1960
6	Կոմունալ տնտեսություն	4425	6162.7	8404.4	6674.6	6179.6	6784.6	6884.6
7	Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	650	648.3	1100	1100	1100	4400	1100
8	Առողջապահություն	0	0					
9	Ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակների	0	0	100	100	100	100	100
10	Գյուղատնտեսություն	0	0	0	3700	0	0	0
11	Այլ ծախսեր	0	0				2545	2695

**2.5 Համայնքի սոցիալ – տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ**

Հարթավան համայնքի սոցիալ- տնտեսական զագացմանը խոչընդոտող մի շարք գործոններ կան : Դրանցից կնշեն հիմնականում հետևյալ գործոնները`

1. Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում:

Չնայած այս ուղղությամբ համայնքում առաջին քայլերը կատարվել են` մասնավորապես 2014 թվականին համայնքում « ՇԵՆ» ԲՀԿ – ի և համայնքի ներդրմամբ կառուցվել կաթի ընդունման կետ , որի հենքի վրա ստեղծվել և ներկայումս գործում է « Հարթավան կաթ» կոոպերատիվը, որը իր կազմում ունի 28 անդամներ : Կոոպերատիվը ունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա` կաթի ավտոմեքենա , կթի ագրեգատներ : Կոոպերատիվի գործունեությունն ավելի արդյունավետ կլիներ , եթե կազմակերպվեր նաև կաթի վերամշակումը :

Համայնքի աշխատունակ բնակչության 90% - ը վարում է գյուղացիական տնտեսություն, իսկ 10 % - ը մեկնում է արտագնա աշխատանքի:

Համայնքում չկա ոչ մի ձեռնարկություն և միավորումներ , սակայն դրա համար կան նախադրյալներ օրինակ հնարավոր է համայնքում ստեղծել հողօգտագործողների միավորումներ , որը կնպաստի առկա գյուղ. նշանակության հողերի ինչպես նաև գյուղտեխնիկայի արդյունավետ օգտագործմանը, որն էլ իր հերթին կապահովի բարձր շահույթաբերություն :Համայնքում հրատապ լուծում պահանջող խնդիր է դարձել պարզ մենատնտեսային արտադրության կազմակերպման փոխարինումը խմբային` ֆերմերային արտադրության կազմակերպմանը: Այլապես եղած հողահանդակների շուրջ 35 % - ը դուրս է մնացել ցանքաշրջանառությունից: Ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտում են նաև մի շարք օբյեկտիվ գործոններ` ոռոգման ջրի սակավությունը և թանկությունը , եղած գյուղ-տեխնիկայի ֆիզիկական մաշվածությունը, սերմանյութերի սակավությունը և այլն:

2.Համայնքի գույքի կառավարումը

Այս նպատակով համայնքում զգալի աշխատանքներ կատարվել են: Մասնավորապես 2014 թվականին վերանորոգվել և գործարկվել է համայնքի մանկապարտեզը, վերանորոգվել է մշակույթի տունը , բուժկետը , կառուցվել է 500 գմ ոռոգման ցանց, վերանորոգվել է խմելու ջրի համակարգը :

**Համայնքի սոցիալ- տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատումը**

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ. մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Մշակույթի տուն	9 փ. 10/2	1974	764	լավ	Դահլիճում չկա այրոններ /300հատ/	
2.	Մանկապարտեզի շենք	13 փ. 1	1989	973	լավ	Մի մասը	
3.	Խմելու ջրագծեր		1954 - 2014թթ	15 կմ	բավարար	Քուչակի Ամբառլու կոչվող աղբյուրի կապտածի հիմնանորոգում	

### 3. Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը

Համայնքում առկա է և գործում է միջնակարգ դպրոց , մանկապարտեզ որտեղ տեղակայված է նաև նախակրթարանը:

Դպրոցը շահագործման հանձնվելու պահից ի վեր` 1976 թվականից, չի վերանորոգվել և գտնվում է խիստ անմխիթար վիճակում , բացակայում է լոկալ ջեռուցում, չնայած գազատար խողովակը հասցվել է մինչև դպրոց , զգացվում է գուլքի , ինչպես նաև դիտակտիվ և այլ նյութերի պակաս :

Մանկապարտեզի շենքի 50 % - ն է վերանորոգված , իսկ մնացած 50% - ը գտնվում է անմխիթար վիճակում: Վերանորոգելու դեպքում շենքը կօգտագործվի իր ամբողջ կարողությամբ և հնարավոր կլինի ընդգրկել նաև հարևան համայնքների երեխաներին:

### 4. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը

Համայնքում այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվել են` վերանորոգվել է դպրոցի մարզադաշտը , ձեռք է բերվել անհրաժեշտ սպորտային գույք և հանդերձանք , վերանորոգվել է համայնքի մշակույթի տունը : Մշակույթի տանը գործում է 2 պարի խմբակներ : Միաժամանակ պետք է նշել , որ այս ուղղությամբ լուրջ խնդիրներ կան` շատ քիչ է կազմակերպվում մշակութային և մարզական միջոցառումներ , իսկ կազմակերպվող միջոցառումները չեն ապահովում անհրաժեշտ որակական մակարդակ :

Միաժամանակ պետք է նշել , որ այս ուղղությամբ լուրջ խնդիրներ կան` շատ քիչ է կազմակերպվում մշակութային և մարզական միջոցառումներ , իսկ կազմակերպվող միջոցառումները չեն ապահովում անհրաժեշտ որակական մակարդակ :

### 5. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը

Համայնքի սոցիալ- տնտեսական զարգացմանը խոչընդոտող այս գործոնի առկայությունը պայմանավորված է նրանով , որ համայնքի ազգաբնակչության մի զգալի մասը չնայած ունի սեփականաշնորհված հողատեսքեր , բայց օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված չի մշակում այն և բնականաբար չի կարող ստեղծել իր ապրուստի միջոցը : Համայնքում գրանցված գործազուրկներ չկան , որովհետև բոլորը ունեն սեփականաշնորհված հողատեսքեր : Ժամանակի հրամայականն է դարձել , որ համայնքում ունենանք սոցիալական հինահարցերով զբաղվող ծառայող :

### 6. Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում

Համայնքի ներհամայնքային ճանապարհների մեծ մասը գտնվում է անբարվոք վիճակում , որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման համար` մասնավորապես ավտոմեքենաների և մեխանիզմների վատ անցանելության ինչպես նաև բերքի տեղափոխման ժամանակ տեղի է ունենում նյութական միջոցների գերածախս :

### 7. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում:

Հարթավան համայնքը , որպես լեռնային համայնք ապահովված չէ տարերային աղետներից մասնավորապես կարկուտ, ցրտահարություն, երաշտ , ուժեղ քամիներ և այլն, որոնք նյութական մեծ վնաս են պատճառում բնակչությանը:

Համայնքի տարածքում չկա ոչ մի հակակարկտային կայան :

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման աշխատանքները գտնվում են անբարվոք վիճակում՝ համայնքում չկա պաշտպանական ոչ մի միջոց՝ ապաստարաններ, պարզագույն թաքստոցներ և պաշտպանական հանդերձանք և պարագաներ:

## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՅՍ) վերլուծություն

### **Համայնքի ուժեղ կողմերը**

- Համայնքում մեծ է տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ունեցողների թիվը:
  - Երևան – Թբիլիսի միջպետական մայրուղին անցնում է համայնքի վարչական տարածքով:
  - Համայնքը 90 % - ով գազիֆիկացված է:
  - Համայնքի հողատարածքները մեքենայացման համար հարմար է:
  - Համայնքից 5 կմ հեռավորության վրա է գտնվում Ապարանի ջրամբարը:
  - Համայնքում գործում է « Հարթավան կաթ » սպառողական կոոպերատիվ
- Համայնքում 1 բնակչի հաշվով բաժին է ընկնում մոտ 1 հա գյուղ. նշանակության հողատեսք:

### **Համայնքի թույլ կողմերը**

- Համայնքում խմելու և ոռոգման ջուրը մատակարարվում է մղիչ պոմպերի միջոցով:
- Համայնքում մեծ է բնակարանի կարիք ունեցողների թիվը:
- Տարեցտարի ավելանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Հողօգտագործողների ստացված եկամուտը շատ ցածր է կապված ոռոգման ջրի սակավության, պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետներով:
- Համայնքը չունի փողոցային լուսավորության ցանց:

Համայնքը ունի բավարար հնարավորություններ գրեթե ամբողջովին ոռոգելի դարձնել հողատարածքները , որի համար անհրաժեշտ է վերագործարկել գոյություն ունեցող ինքնահոս ոռոգման ցանցը և ամենակարևորը ճիշտ կազմակերպել ջրի կառավարումը:

Համայնքը իր վարչական տարածքում ունի 2 փոքր ջրամբարներ , որը նույնպես որոշակի ֆինանսական միջոցների ներդրման դեպքում ( պոմպերի տեղադրում , ոռոգման ցանցի անցկացում) կարող է օգտագործվել ոռոգման նպատակով :

Համայնքին սպառնացող վտանգներն են

1. Տարերային աղետներ

2. Բնակչության սոցիալ – տնտեսական վատ վիճակը , որի հետևանքով մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը :

3. Ներհամայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակը

4. Գույքային հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները և ապառքների մեծ տոկոսը:

*3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում*

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Հարթավան համայնքի զարգացման գլխավոր ճյուղը համարվում է գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսությունից ստացված համախառն արտադրանքի շուրջ 65% - ը բաժին է ընկնում անասնաբուծությանը, իսկ 35% - ը դաշտավարությանը: Ինչպես վերևում նշեցի համանքում առկա է բոլոր ռեսուրսները զարգացնելու այս ճյուղը: Առաջիկա 5 տարիների ընթացքում հետևողական աշխատանքներ կտարվեն համայնքում հողօգտագործողների միավորումներ ստեղծելու, ցանքաշրջանառությունից դուրս մնացած հողատեսքերը մշակելու , նոր գյուղատեխնիա ձեռք բերելու , գյուղատնտեսության մեջ նոր, առաջավոր փորձի և տեխնոլոգիաների ներդրումն ապահովելու, ոռոգման ցանցի վերակառուցման ու արդիականացման ուղղությամբ: Աշխատանքներ կտարվեն « Հարթավան կաթ » սպառողական կոոպերատիվի աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ :

Հետևողական աշխատանքներ կտարվի համայնքում խմելու ջրի հիմնահարցի լուծման, ներհամայնքային ճանապարհների բարեկարգման , փողոցային լուսավորության անցկացման , նախակրթական և կրթական աշխատանքների բարելավման, մշակութային կյանքի ակտիվացման, աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման և խթանման համար :

Նշված հիմնախնդիրների լուծումը կապահովվի համայնքի կայուն և դինամիկ զարգացումը, որի արդյունքում էապես կնվազի աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը` շուրջ 50% - ով , կբարձրանա բնակչության եկամուտները , որի արդյունքում բնականաբար հողօգտագործողները հնարավորություն կունենան ժամանակին վճարել իրենց ինչպես տարեկան, այնպես էլ նախորդ տարիների գույքային հարկերը, որը և կնպաստի համայնքի սեփական եկամուտների աճին , որը և խթան կհանդիսանա համայնքային խնդիրների լուծման



**Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	24%	20%	18%	17%	15%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	1.1 %	1.1%	1.1%	1.1 %	1.1%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	1%	1.5 %	1.7 %	2%	2.5 %

**3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները**

Առաջիկա 5 տարիների համար համայնքի հիմնական նպատակներն են՝

1. Համայնքի Քուչակ – Հարթավան խմելու ջրագծի « Ամբառլուի» ջրաղբյուրի ջրհավաք ավազանի կապտաժների վերակառուցում:
2. Ոռոգման ցանցի Արագած - Հարթավան ինքնահոս համակարգի վերակառուցում:
3. Փողոցային լուսավորության ցանցի անցկացում:
4. Մանկապարտեզի շենքի մնացած 50% հատվածի նորոգում:
5. Ներհամայնքային ճանապարհների նորոգում:

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում :

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1

### «Փողոցային լուսավորության ցանցի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքը ապահովել գիշերային լուսավորությամբ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3600.0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքները՝ համայնքի փողոցները կլինի բարեկարգ ու գեղեցիկ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3600.0	0	0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0		3600.0	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հեմասյունների կառուցում 1.2. Լուսատուների տեղադրում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 600.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3600.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մարդկային ռեսուրսներ , որը կապահովվի համայնքի աշխատունակ բնակչությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2017 թ. - 01.07.2017թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է անցկացնել 1.8 կմ ընդհանուր երկարության փողոցային լուսավորության ցանց						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2

«Համայնքի Քուչակ – Հարթավան խմելու ջրագծի Ամբառլուի

ջրաղբյուրի կապտաժների վերակառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքը ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	3400.0	0.0	0.0	0.0
Ծրագրի միջանկյալ արդյունքները՝ կբարելավվի համայնքի բնակիչների կենցաղային պայմանները, կնվազի խմելու ջրի նպատակով կատարված ծախսերը	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	3400.0	0.0	0	0
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0.0		0.0	3400.0	0.0	0.0	0.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Կապտաժների վերակառուցում 1.2. փականային համակարգերի տեղադրում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 2900.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3400.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մարդկային ռեսուրսներ , որը կապահովվի համայնքի աշխատունակ բնակչությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ծրագիրը իրականացվում է ոչ մեքենահարմար տեղանքում՝ ժայռերի ստորոտում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.05.2018 թ. - 01.08.2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է վերակառուցել Քուչակ համայնքի վարչական տարածքում գտնվող « Ամբառլուի » ջրաղբյուրի թվով 2 կապտաժները և կառուցել սանիտարական գոտի::						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3

«Համայնքի Արագած - Հարթավան ոռոգման ինքնահոս ցանցի վերակառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքը ապահովել ինքնահոս ջրամատակարարմամբ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	3700.0	0.0	0.0
Ծրագրի միջանկյալ արդյունքները՝ կբարձրանա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, որը և կխթանի հողօգտագործողների եկամուտների ավելացմանը	5.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	3700.0	0	0
	6.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	3700.0	0.0	0.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Վթարված հատվածների վերակառուցում 1.2. փականային համակարգերի տեղադրում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 700.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3700.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մարդկային ռեսուրսներ , որը կապահովվի համայնքի աշխատունակ բնակչությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Խողովակաշարը անցնում է Շենավան համայնքի բնակիչներին պատկանող հողատարածքներով						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2019 թ. - 01.07.2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է վերակառուցել Արագած - Հարթավան ոռոգման ջրի փակ խողովակաշարը::						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4

### «Հարթավանի ներհամայնքային ճանապարհների նորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքը ապահովել բարեկարգ ճանապարհներով	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	0.0	3300.0	0.0
Ծրագրի միջանկյալ արդյունքները՝ ճանապարհները կղառնան անցանելի, կբարձրանա մեքենամեխանիզմների ՕԳԳ - ը	7.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	0.0	3300.0	0
	8.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0.0		0.0	0.0	0.0	3300.0	0.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ավագա - կոպչային գրունտով ճանապարհների հարթեցում</p> <p>1.2. Կողային առուների մաքրում, կիսախողովակների տեղադրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1.</p> <p>2.2.</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 300.0 հազար դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 3000.0 հազար դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 3300.0 հազար դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մարդկային ռեսուրսներ, որը կապահովի համայնքի աշխատունակ բնակչությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի ազգաբնակչությունը						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.06.2020 թ. - 01.08.2020թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է վերականորոգել համայնքի ինչպես ներհամայնքային, այնպես էլ դաշտամիջյան ճանապարհները:						

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 5

### «Հարթավանի մանկապարտեզի շենքի մնացած 50% - վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ Մանկապարտեզի շենքը օգտագործել իր ամբողջ կարողությամբ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	0.0	0.0	4200
Ծրագրի միջանկյալ արդյունքները՝ Մանկապարտեզից կօգտվեն նաև հարևան համայնքների երեխաները	9.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0	0.0	0.0	0.0	4200
	10.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0.0		0.0	0.0	0.0	0.0	4200	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Շենքի վերանորոգում 1.2. Գույքի ձեռք բերում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1200.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 3000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 4200.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մարդկային ռեսուրսներ, որը կապահովի համայնքի աշխատունակ բնակչությունը						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Ինչպես համայնքի, այնպես էլ հարևան համայնքների բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2021 թ. - 01.08.2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է վերականորդել համայնքի մանկապարտեզի մնացած չվերանորոգված մասը՝ դռների և պատուհանների փոխարինում, ներքին հարդարում և գույքավորում:						

#### 4. ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀՀԶԾ – ուն ընգրկված վերը նշված ծրագրերը ֆինանսավորվում են համայնքի սեփական եկամուտների հաշվին: Նշված ծրագրերի արժեքները ըստ տարիների իրատեսական թվեր են և համայնքը հնարավորություններ ունի կատարելու բոլոր նախանշած ծրագրերը: Բնականաբար ներքին և արտաքին պաշտոնական դրամաշնորհների, բարեգործական նվիրատվությունների առկայության դեպքում ՀՀԶԾ – ուն կկատարվի փոփոխություններ և լրացումներ:









